

ԿԿՈՒ ԲԱՅԱՌԻՒՎ 2022





2022



ԿԱՂԱՆՂ ՊԱՊՈՒԿԻՆ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Դեկտեմբերեան գեղեցիկ գիշեր մըն էր, կապոյտ, յստակ երկինքն ու ծառերուն ձիւնածածկ գագաթները կ'երեւէին: Սուրբ Ծնունդի ներկայութիւնը զգալի էր, սակայն Կաղանդ Պապուկին խրճիթը, այդ օր, կը մնար ամբողջովին լուռ:

Սովորական նուէրներու պատրաստութեան իրարանցումը չկար այս տարի, որովհետեւ Կաղանդ Պապուկը անհանգիստ էր:

-Տէ՛ր Աստուած, արդեօք ի՞նչ պիտի ըսեն այն փոքրիկները, որոնց նոր տարուան նուէրները պիտի չհասնին, ինչպէս նախորդ տարիներուն...,- յուզուած ինքն իրեն կը մտածէր ան, անկողինին մէջ պառկած:

Յանկարծ, Կաղանդ Պապուկը աղմուկ մը լսեց: Գլուխը երկարեց պատուհանէն ու տեսաւ իր չորս եղնիկները, սովորականին պէս ամբողջովին պատրաստ կանգնած, սակայն անոնք հեւասպառ էին, որովհետեւ արդէն իսկ երկա՛ր ճամբայ կտրած էին:

Կաղանդ Պապուկը աչքերը շփեց, փորձեց աւելի մօտենալ պատուհանին եւ ի՛նչ տեսնէ: Չորս եղնիկներուն սայլերը ամբողջովին լեցուն են գոյնզգոյն զգեստներ հագած փոքրիկներով: Անոնք սկսան մէկ առ մէկ սայլէն ցատկել եւ ուղղուիլ դէպի Կաղանդ Պապուկին խրճիթը, ու արդէն իսկ դրան զանգակը հնչեց:

-Նե՛րս հրամմեցէ՛ք,- հետաքրքրուած ըսաւ Կաղանդ Պապան: Ներս մտաւ փոքրիկ աղջիկ մը, թելերուն մէջ փաթթած կակուղ պուպրիկ մը:

-Լսեցի, որ անհանգիստ ես, պարո՛ն Կաղանդ Պապա,- ըսաւ ան ու երկարեց ձեռքի պուպրիկը, որ ան ընկերակցի Կաղանդ Պապային ու միևնաջգայ անհանգիստ եղած ատեն:

-Շնորհակալ եմ, Էմմա՛,- ըսաւ Կաղանդ Պապուկը, որ արդէն իսկ բոլոր փոքրիկները մէկիկ-մէկիկ անունով կը ճանչնար:

Այսպիսով՝ բոլոր փոքրիկները մէկ առ մէկ մօտեցան Կաղանդ Պապուկին եւ իրենց պատրաստած յատուկ նուէրները՝ կարկանդակ, անուշեղէն, գիրքեր, գուլպաներ ... եւ նոյնիսկ փոքրիկ տօնածառ մը փոխանցեցին անոր, մաղթելով՝ ապաքինում:

-Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը իմ դուռը թակեցին այսօ՛ր: Մօտեցէ՛ք փոքրիկներ, եկէ՛ք միասին բաժնեկցինք այս սքանչելի նուէրները,- բացազանչեց Կաղանդ Պապան:

-Կաղանդ Պապո՛ւկ, ո՞ր նուէրը ամենէն շատ սիրեցի՞ր,- շուտով հարցուց փոքրիկ Էմման:

Կաղանդ Պապան ժպտելով պատասխանեց,- իմ շատ սիրելի փոքրիկներս: Այսօր, դուք սեր եւ բարութիւն ցոյց տուիք ինձի եւ ասոնք ամենէն հրաշալի նուէրներն են...: Ապա ան սիրով լեցուն նայուածքով իւրաքանչիւր փոքրիկի եռանդուն դէմքին նայեցաւ ու ըսաւ.

-Ա՛յս է իսկական Նոր Տարին:



1

2



2022

Աշխարհի մէջ բազմաթիւ ժողովուրդներ Նոր Տարուան ուրախ տօներուն գլխաւոր հերոս կը դարձնեն սպիտակամօրուք բարեսիրտ ծերունին՝ գայն կոչելով Փեր Նոել, Ձմեռ Պապ, Կաղանդ Պապուկ, Սանթա Բլաուս...

Հայերը, ինչպէս ծանօթ է, տակաւին նախաքրիստոնէական շրջանէն տօնած են Նոր Տարին գայն անուանելով Նաւասարդ, Կաղանդ, Ամանոր... այս տօներուն եւս փոքրիկներու եւ յաճախ մեծերու սիրելի հիւրը եղած է Կաղանդ Պապան կամ Կաղանդ Պապուկը: Ան համարուելով

տան բարօրութեան երաշխաւորը միշտ ուրախութիւն բերած է հայկական օճախներ՝ քաղցրեղէն սուրճելով ընտանիքի անդամներուն:

Յետքրիստոնէական շրջանին Հայաստանի որոշ շրջաններու մէջ այս կերպարը փոխարինուեցաւ Մեծն Պապուկի կամ Պարթեւ Պապուկի կերպարով, որ Հայոց Կաթողիկոս Ս. Սահակ Պարթեւի (Դ. դար) կերպարի վերարտադրութիւնն էր:

Հաւատանք կամ ոչ Կաղանդ Պապային, անոր եւրոպական նախատիպն ալ, ինչպէս Ս. Սահակինը, պատմական անձնաւորութիւն եղած է՝ Դ. դարու քրիստոնէական սուրբերէն





2022

Նիկողայոս Սքանչելագործ Հայրապետ:
Ասոր անունը կարելի է տեսնել Կաղանդ
Պապայի անգլերեն անունան մեջ, որով Սանթա
Քլաուսը «Սանթ Նիքոլաուսի» փոփոխուած
տարբերակը կ'ըլլայ:

Ս. Նիկողայոս յայտնի եղած է իր
բարեսիրութեամբ, ուստի քրիստոնէական
բազմաթիւ պատմութիւններ կը վկայեն, թէ ան
ինչպէ՞ս մարդոց օգնութեան կը հասներ
առանց յայտնի ընելու, օգնելով աղքատներուն

Եւ յուսալքուածներուն: Իր գաղտնի
նուերները սուրբը յաճախ կը մատուցեր
ծիսնելոյզէն տունին մէջ նետելով
ոսկեդրամներ եւ նուերներ: Ասոր համար է,
որ Կաղանդ Պապան ալ այսօր ծիսնելոյզէն
կը մատուցէ իր նուերը, յաճախ կը հագուի
եպիսկոպոսի նման, ունի երկար, ճերմակ
մօրուք եւ հովուական գաւազան մը:





Կկո՛ւ

ԱՄԱՆՈՐԵԱՆ ՅՐԱՇՔԸ

ԲԱՑԱՌԻԿ



Կկո՛ւ

2022



Կար ու չկար գեղեցիկ անտառ մը կար, դալար ու կանաչ: Յատկանշական բուրմունքով ծաղիկներ կային այս անտառին մէջ, ուր կը լսուէր բազմազոյն թռչուններու ուրախ երգը:

Անտառին մէջ կ'ապրէին բազմաթիւ գեղեցիկ ու բարի կենդանիներ: Չարմանալի էր, բայց կենդանիները շատ համերաշխ ու անվնաս կը վարուէին իրարու հետ: Անոնք միասին կը խնամէին անտառը եւ կը պատրաստուէին ձմրան: Անոնց ամենասիրելի տօնը Ամանորն էր: Բոլորը անհամբեր կը սպասէին այդ հրաշալի տօնին:

Եւ ահա արջը, սապաստակը եւ ոզնին որոշեցին երթալ անտառին խորը եւ ընտրել տարուան եղելինը:

-Եղելինը պետք է ըլլայ շատ մեծ եւ բարձր,- ըսաւ արջը:

-Ինչո՞ւ բարձր,- զարմացաւ սապաստակը:

-Թող ըլլայ փոքրիկ, փափուկ եւ արծաթափայլ, ինչպէս ես:

-Ո՛չ, ո՛չ եղելինը պետք է ըլլայ փշոտ եւ փոքր:


-Իսկ ես կ'ըսեմ, որ ան պետք է ըլլայ մեծ, խոշոր ինչպէս ես,- մոթմոթաց արջը:

Կենդանիները նեղացան, եւ իւրաքանչիւրը մէկ կողմ քաշուեցաւ: Արջը փնթփնթալով այս ու այն կողմ գնաց եւ վերջապէս ըսաւ.






2022



-Ինչո՞ւ եղեւինը չըլլայ բարձր, փշոտ եւ արծաթափայլ:
 -Ճի՛շդ է, ճի՛շդ է,- բացագանչեցին ոգնին ու նապաստակը:
 Վերջապէս անոնք ընտրեցին անտառի ամենագեղեցիկ եղեւինը:
 Առաւօտեան, կենդանիները խաղալիքներով լեցուն բազմաթիւ պարկերով եկան անտառի խորը եւ զարմանքէն քարացան, ոչ մէկ եղեւին մնացած էր այնտեղ:
 Մարդիկ բոլորը կտրեր ու իրենց տուները տարեր էին: Նապաստակները սկսան բարձրաձայն լալ:
 -Տեսէ՛ք, տեսէ՛ք,- գոռաց արջը,- այնտեղ հեռուն փոքրիկ եղեւին մը կայ, թող ան ըլլայ մեր տօնածառը:



-Տօնածառը փոքր, բայց մեր սրտերը թող ըլլան մեծ ու բարի,- շատախօսեց սկիւռիկը:
 Կենդանիները զարդարեցին եղեւինը եւ հեռացան: Ամանորի գիշերը կենդանիները հաւաքուեցան եւ փոքրիկ տօնածառի փոխարէն տեսան հսկայ, արծաթափայլ եղեւին մը՝ զարդարուած փայլփլուն խաղալիքներով ու լոյսերով: Անկա Կաղանդ Պապուկին ամանորեան հեքիաթային նուէրն էր բարի կենդանիներուն:
 Երբ կը հաւատաս ամանորեան հրաշքներուն, անպայման կը կատարուին:



10



Կկո

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

ԲԱՅԱՌԻԿ

Կկո



2022

Նոր Տարին գեղեցիկ ու երկար սպասուած տօն է՝ յատկապէս մանուկներուն համար: Կը խորհինք, թէ մենք ամէն ինչ գիտենք ու այլեւ ոչինչ մնացած է սորվելու եւ իմանալու այս հիասքանչ տօնին մասին: Սակայն մի՛ աճապարեք այսպիսի եզրակացութիւն կազմել ձեր մտքերուն մէջ, որովհետեւ այժմ պիտի ծանօթանանք Ամանորի մասին հետաքրքրական փաստերու:

Առաջին վկայութիւնները տօնածառ գարդարելու աւանդոյթին մասին արձանագրուած են 17-րդ դարուն սկիզբը, Ֆրանսայի մէջ: Չարդարանքի համար օգտագործուած են գունաւոր թուղթերէ պատրաստուած վարդեր, խնձորներ, շաքարի հատիկներ եւ փայլեր:

Առաջին ապակեայ խաղալիքները պատրաստուած են Սաքսոնիոյ մէջ, 16-րդ դարուն, սակայն անոնց մեծաքանակ արտադրութիւնը սկսած է 19-րդ դարու կեսերուն, կրկին Սաքսոնիոյ մէջ:

Վարպետ ապակեգործները խաղալիքները կը պատրաստէին, իսկ անոնց աշակերտները խաւաքարտով զանգակներու եւ թռչուններու կամ կենդանիներու նման ձեւեր տալով կը կտրէին, ետքը վառ գոյներով կը ներկէին զանոնք:

Առաջին անգամ ելեկտրական ծաղկեշղթաներ օգտագործուած են ԱՄՆ-ի Սպիտակ Տան մէջ, 1895 թուականին:

Հին Հռոմի մէջ Ամանորը կը սկսէր Մարտ ամսուն: Ն.Ք. 46 թուականին Յուլիոս Կեսարը տարուան սկիզբը փոխարինած է Յունուար մէկով, որմէ ետք իր անունով կոչուած Յուլիան օրացոյցը տարածուած է ամբողջ Եւրոպայի մէջ:

Ֆրանսայի մէջ մինչեւ 755 թուական, տարեմուտը որոշուած էր Դեկտեմբեր 25-ին, ետքը փոխարինուած էր Մարտ մէկով: Այսպիսով 12-րդ դարուն տարուան սկիզբը Չափկով կը սկսէր: Սակայն 1564 թուականին Գարլոս 19-ի հրամանով տարեմուտը նշուած է Յունուար 1-ին:

Քուպայի մէջ Ամանորը կը կոչուի Թագաւորներու օր:

1843 թուականին Լոնտոնի մէջ տպագրուած է առաջին ամանորեան բացիկը: Ճիշդ այս թուականէն ի վեր, մարդիկ սկսած են գիրար Նոր Տարուան առիթով բացիկներ ևւիրել:





2022

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՆՈՐԸ

Հայեր քրիստոնեությունը ընդունել է առաջ Նոր Տարին կը նշեն 21 Մարտին: Գարնան առաջին օրուան եւ Վահագն աստուծոյ ծննդեան օրուան համընկնող այս թուականը 10.000 տարի առաջ ճոխ հանդիսություններով կը նշուէր Հայաստանի տարածքին:

18-րդ դարուն, մէկ Յունուարը ընդունուեցաւ որպէս Նոր Տարուան առաջին օրը: Սակայն Սիւնիքի եւ Արցախի մէջ տակաւին կը նշուէր Նաւասարդը: 20-րդ դարուն էր, որ բոլորին կողմէ 1 Յունուարը ճանչցուեցաւ, որպէս Նոր Տարուան առաջին օր:

Նոր Տարուան գիշերը, հայ մանուկներ խումբեր կազմած, գիւղին մէջ երգելով կը պտտէին եւ նուէրներ (պտուղներ) կը ստանային: Հետզհետէ, ընտանիքի անդամներն ալ սկսան իրարու նուէրներ փոխանակել:

Նոր Տարուան սեղանին անպակաս կ'ըլլար չիրն ու չամիչը, ընկոյզն ու կաղինը, անուշեղենը եւ հարիսան:

Տարինը խոշոր եւ տափակ հացն էր, որուն մէջ մանր դրամ պահուած կ'ըլլար՝ տարուան բախտաւորը որոշելու համար: Այդ օրուան յատկանշական ճաշը կ'ըլլար լիցքը, իսկ անուշեղեններէն՝ գաթան եւ անուշապուրը:





2022

ԿԱՐՄԻՐ ՔԻԹՈՎ ՌՈՒՏՈՆԵՐ

Հիսիսային բեռերը, ուր կ'ապրեք Կաղանդ Պապուկը, կ'ապրեին նաեւ բազմաթիւ եղնիկներ:

Սուրբ Ծնունդեան մնացած էր միայն մէկ օր, երբ Կաղանդ Պապուկը փոքրիկներուն խաղալիքներ եւ նուէրներ հասցնելու համար ընտրեց լաւագոյն ուրը եղնիկները՝ սայլը քշելու: Եղնիկներուն խումբին մաս կը կազմէին Վառվառուը, Պարողը, Կայտառը, Կռուագանը, Գիսաւորը, Կուպիտոն, Տօները եւ Պլիծընը: Կաղանդ Պապուկը զանոնք կ եր ա կ ր ե ց կ ա խ ա ր դ ա կ ա ն ե գ հ ա տ ա ց ո ր ե ն ո վ, ո ր ա է ս զ ի կ ար ե ն ա ն շ ա տ բ ար ձ ր եւ ար ա գ ս ուր ալ:

Կաղանդ Պապուկը ուներ փոքրիկ եղնիկ մը եւս՝ Ռուտուլֆ անունով, Տօներուն եւ Պլիծընին զաւակը: Ռուտուլֆ մեծ, վառ ու կարմիր գոյնով քիթ մը ուներ եւ այդ քիթը սովորական քիթերու չէր նմաներ: Միւս եղնիկները կը ծիծաղէին Ռուտուլֆին


վրայ եւ երբեք թոյլ չէին տար անոր միանալ իրենց զուարճանքներուն ու խաղերուն: Ռուտուլֆ շատ միևնակ ու տխուր կը զգար:

Սուրբ Ծնունդէն մէկ օր առաջ, Ռուտուլֆ զնաց Կաղանդ Պապուկին քով եւ հարցուց, թէ կրնա՞ր ինք եւս միանալ սայլը առաջնորդող եղնիկներու խումբին: Կաղանդ Պապուկը շատ կը սիրէր Ռուտուլֆը, բայց սայլ քաշելը բաւական դժուար գործ էր: Ուստի ան փոքրիկ եղնիկներուն խորհուրդ տուաւ մնալ տունը եւ սպասել, մինչեւ որ քիչ մը մեծնան:

Միւս եղնիկները իմանալով այս պատմութիւնը քրքջացին եւ շարունակ գինք ծաղրեցին: Ռուտուլֆ լսելով ծաղրանքները շատ ամչցաւ: Ան ամօթէն պահեց իր յատուկ եւ անկրկնելի քիթը ու քալեց դէպի տուն:

Սուրբ Ծնունդեան նախօրեակին, Կաղանդ Պապուկին մեկնելէն միայն մէկ ժամ առաջ, ահռելի ձիւնաբուք մը սկսաւ եւ երկինքը մթնցաւ:

-Ի՞նչ կը պատահի: Կաղանդ Պապուկը բաւական մտահոգ էր. ան կը վախնար, որ այս ցուրտ օդին նուէրները փոքրիկներուն տուները չհասնին, ուստի պատուիրեց իր սայլը քշող խումբին շուտով ճամբայ ելլել: Բայց այնքան



մութ էր, որ ան չէր կրնար տեսնել ճամբան: Սայլը աչ ու ձախ, անդադար ծառերուն կը զարնուէր ու յանկարծ քարի մը մէջ մխրճուեցաւ:

Յանկարծ Կաղանդ Պապուկը յիշեց Ռուտովֆը, իր պայծառ, փայլուն ու լուսաւոր քիթով, որ կրնար զօրաւոր լոյսի դեր կատարել, զիրենք սայլով առաջնորդելու: Ան վազեց Ռուտովֆին մօտ եւ արթնցուց զինք: Փոքրիկ եղնիկը շատ զարմացաւ եւ ուրախացաւ, երբ տեսաւ Կաղանդ Պապուկը: Անոր քիթը նոյնիսկ սովորականէն աւելի կը փայլէր այդ օր:

Կաղանդ Պապուկը խնդրեց որ ան առաջնորդէ միւս եղնիկները՝ քաշելու սայլը: Այնուհետեւ մութ գիշերուան մէջ, Ռուտովֆ առաջնորդեց սայլերու խումբը՝ սաստիկ քամիին եւ մառախուղին ընդմէջէն: Բայց խիզախ, փոքրիկ հիւսիսային եղնիկը ամէն ինչ կ'ընէր արագ թռչելու համար: Միւս եղնիկները հետեւեցան Ռուտովֆի

մեծ փայլուն քիթին, որպէսզի մնան ճիշդ ճամբուն վրայ: Հիանալով Ռուտովֆի քաշութեամբ՝ անոնք նաեւ իրենց լաւագոյնը ըրին աւելի արագ թռչելու համար:

Առաւօտեան, երբ արեւուն առաջին շողերը երեւցան, ձիւնը սկսաւ հալիլ, Կաղանդ Պապուկը արդէն հասցուցած էր Նոր Տարուան բոլոր խաղալիքները ամբողջ աշխարհի փոքրիկներուն:

Երբ տուն հասան, Կաղանդ Պապուկն ու սայլերու խումբը բոլորին կողմէ ջերմօրէն ընդունուեցան, իսկ Ռուտովֆ օրուան հերոսն էր:

Կաղանդ Պապուկը Ռուտովֆին խիզախութեան համար պատուոյ շքանշան նուիրեց: Ան նաեւ դարձաւ ամենաերիտասարդ եղնիկը, որ մաս կազմած է Կաղանդ Պապուկի սայլերու խումբին: Այդ օրուանէ, բոլորը կը սիրէին Ռուտովֆը: Միւս եղնիկներն ալ բնաւ չէին ծիծաղէր իր յատուկ քիթին վրայ:

Այսպիսով՝ Ռուտովֆ այլեւս շատ հպարտ կը զգար իր վառ, կարմիր քիթով:



ՓՈՔՐԻԿ ԱՂՋՆԱԿԸ ԵՒ ՁՄԵՌՆԱՅԻՆ ՄՐՐԻԿՆԵՐԸ

ԲԱՅԱՌԻԿ

ԿԿՈՒ

2022

Կար ու չկար, երկրի մը մէջ չարամիտ կախարդ մը կար: Օր մը այս կախարդը որոշեց Գարնան եղանակը դադրեցնել եւ տարուան չորս եղանակները վերածել ձմեռուան: Ան պահեց արեւը մութ ամպերու տեւ եւ ամբողջ երկիրը առատ ձիւնով ծածկեց:

Այսպիսով առաւօտ մը լեռնային գիւղի մէջ բնակող մարդիկ երբ արթնցան, իրենք զիրենք, իրենց տուներով միասին, ձիւներու տակ մնացած գտան: Անոնք սկսան իրենց տուներէն մինչեւ դրացիներուն տուները դժուարութեամբ ձիւնը վերցնել ու ճամբաներ բանալ եւ փոքր խումբերով հաւաքուեցան, որպէսզի ճար մը գտնեն պատահածէն ազատելու:

Անոնք վերջապէս որոշեցին, որ ամենէն լաւ լուծումը գիւղացիներէն մէկուն ուղարկելն է դէպի ամենաբարձր լեռան գագաթը, ուր բարի Ձմեռ Պապուկը կ'ապրէր իր սառուցեալ պալատին մէջ: Ան կը կոչուէր Հայր Ֆրոստ, կարելի էր օգնութիւն խնդրել իրմէ:

Բայց ոչ ոք պատրաստ էր այսպիսի վտանգաւոր եւ երկար ճամբայ կտրելու:

-Ես պատրաստ եմ երթալու,- ըսաւ ծերունի մը,- բայց կը վախնամ, որովհետեւ շատ ծեր եւ դանդաղ եմ՝ ճշգրիտ ժամանակին գագաթ հասնելու համար: Եթէ 20 տարի առաջ ըլլար ու երիտասարդ ըլլայի...:

-Մի՛ մտահոգուիր, պապիկ, ես կ'երթամ,- ըսաւ ծերունիին փոքրիկ թոռնուհին: Ան որբ էր, կ'ապրէր ծերունիին տան մէջ, որովհետեւ ընտանիք չունէր:

-Ո՛չ, դուն ո՛չ,- ըսին դրացիները խղճալով,- դուն Լոյսիսկ տաք վերարկու չունիս, ո՛չ գլխարկ, ոչ ալ Լոյսիսկ բուրդէ ձեռնոցներ:

-Ես չեմ վախնար,- ըսաւ փոքրիկ աղջիկը,- իմ ոտքերը ամուր են, ես լեռնային այծի պէս արագաշարժ եմ:

-Բայց առանց ցուրտ պահպանող ապաստանի, այնտեղ կը սառիս:

-Չեմ սառիր,- ըսաւ աղջիկը հաստատակամ կերպով,- ես ջերմ, փոքրիկ սիրտ մը ունիմ, բոլորին հանդէպ սիրով լեցուն: Այդ է, որ զիս կը փրկէ սառնամանիքէն:

-Գնա՛, գաւա՛կս,- ըսաւ ծերունիին,- ես գիտեմ քու բարի սիրտը եւ կը վստահիմ անոր: Գիւղին փոքրիկները, որոնք բոլորն ալ իր ընկերներն էին, տուին իրենց ամենէն ջերմ հագուստները:

-Ահա՛, ա՛ն իմ վերարկուն,- ըսաւ անոնցմէ մէկը փոքրիկ աղջկան:

-Իմ ձեռնոցները շատ տաքուկ կը պահեն, օգտագործե՛,- ըսաւ ուրիշ մը:

-Գործածէ իմ գլխարկն ու վզնոցը, իմ բուրդէ գուլպաները եւ իմ կօշիկները...:

Փոքրիկ աղջիկը արդէն պատրաստ էր մեկնելու:



19



20

Ան հրաժեշտ տալով գիւղացիներուն եւ ընկերներուն, արագ-արագ քալեց դէպի ձիւնառատ լեռան գագաթը... ան աւելի ու աւելի բարձրացաւ, երբեք չմտածելով հանգիստի մասին եւ շուտով յաջողեցաւ տեսնել փայլուն սառոյցը ամենաբարձր գագաթին վրայ:

Յանկարծ մրրիկները քունէն արթնցան եւ ձիւներուն մէջ նկատելով փոքրիկ աղջիկը՝ սաստկացան. «Ո՛վ կը համարձակի խուժել մեր ունեցումները... Եկէ՛ք ցոյց տանք անոր, թէ ո՛վ ենք մենք», անոնք գոռացին: «Եկէ՛ք փչենք անոր վրայ այնքան զօրաւոր, մինչեւ զինք մոռցնենք, թէ ո՛ր կ'երթար»: Եւ անոնք սկսան կատաղօրէն դառնալ փոքրիկ աղջկան շուրջը: Աղջնակը կծկուեցաւ իր տաք վերարկուին մէջ եւ խիզախօրէն շարունակեց ճամբան:

Փոթորիկները յոգնեցան եւ մէկը միւսին ետեւէն շունչ քաշելով ինկաւ գետին:

-Ի՛նչ զօրաւոր աղջիկ մըն է,- ըսաւ անոնցմէ մէկը,- մենք ուժասպառ ենք, ան նոյնիսկ չէ յոգնած...:

-Ոչ մէկ մարդ մեր ուժը գերազանցած է: Եթէ չենք կրնար մենք գմեզ կառավարել, եկէ՛ք օգնութեան կանչենք մեր քոյր ձիւնամրրիկները:

Ձիւնամրրիկները պատահարը լսելով շատ զայրացան, մռնչեցին եւ ինկան փոքրիկ աղջկան ետեւէն:

Այս պայքարը երկա՛ր եւ անհաւասար պայքար էր, բայց փոքրիկ աղջնակը նոյնպէս յաղթահարեց ձիւնամրրիկները՝ շնորհիւ իր զօրաւոր, ջերմ սրտին, զոր երբեք թոյլ չէր տար վախ կամ յոգնութիւն զգալ:

Ձիւնամրրիկները հեւասպառ եւ ամօթահար գետին ինկան:

-Մենք չկրցանք զինք կեցնել կամ խանգարել: Եկէ՛ք մեր մօրը օգնութեան կանչենք:

-Մայրի՛կ, մայրի՛կ,- անոնք միաձայն կանչեցին,- հասի՛ր օգնութեան:

Ձիւնամրրիկներուն մայրը ձմեռնային ցրտաշունչ կախարդն էր: Ան անմիջապէս եկաւ ու ըսաւ.

-Ես ամէ՛ն ինչ տեսայ. իսկ հիմա լսեցէ՛ք զիս. երբ չէք կրնար ուժով յաղթել, ամէն ինչ հակառակ դարձուցէ՛ք: Եկէ՛ք լաւ եւ համերաշխ ըլլանք անոր հետ:

-Այսինքն ի՛նչ ընենք, համբուրե՛նք զինք,- հարցուց մրրիկ մը հեգնանքով:

-Այդպէս չէ,- ըսաւ ցրտաշունչ կախարդը,- եկէ՛ք փորձենք քաղաքավար եւ բարի ըլլալ, որպէսզի անոր մտքին մէջ լաւ տպաւորութիւն ձգենք:

Այսպիսով, ձիւնամրրիկները դադրեցան, իսկ ձիւնաբուքերը հեռացան:



Յրտաշունչ ձմեռնային կախարդը յայտնուեցաւ փոքրիկ աղջկան առջեւ, գեղեցիկ երիտասարդ կնոջ դէմքով, փայլուն սպիտակ զգեստով, երկա՛ր սպիտակ մազերով եւ աղամանդէ թագով:

-Կ'երագե՛մ, թէ այս պատահածը լաւ հրաշք մըն է,- մտածեց աղջիկը,- այս գեղեցիկ կինը իմ սիրելի մօր դէմքը ունի, եւ հիմա ես կը լսեմ իր քաղցր ձայնը: Օ՛, որքա՛ն կ'ուզեմ աւելի ու աւելի երկար լսել: Ես քիչ մը այստեղ նստիմ...,- ըսաւ ան ինքն իրեն:

-Ահա որքան մօտեցած եմ պալատին, քալելու մէկ ժամէն աւելի չէ մնացած... ժամանակին կը հասնիմ...:

Փոքրիկ աղջիկը նստաւ ու փակեց աչքերը: Ձմեռնային ցրտաշունչ կախարդը հիացած քնծիծաղեցաւ,- քնացի՛ր, փոքրի՛կ աղջիկ: Եւ թող յաւերժական քունը ըլլայ:

Յետոյ ան ձգեց քնացած աղջկան ձիւնառատ բլուրի մը վրայ ու թռաւ հեռու՝ զաւակներուն պատմելու, թէ ինչպէ՛ս յաջողեցաւ խաբել աղջիկը:

Փոքրիկ աղջիկը քնացած էր՝ ուրախ ժպիտով, բայց անոր դէմքին գոյնը կը փոխուէր ժամանակի ընթացքին: Անոր վարդագոյն այտերը սկիզբը դարձան կարմիր, յետոյ կապոյտ, ապա դեղին... Ան կամաց-կամաց կը սառէր...մինչեւ որ յանկարծ բան մը շարժեց գետնի ձիւնը: Լսուեցաւ ճռռոց մը եւ ձիւնին անցքէն փոքրիկ գլուխ մը երեւցաւ: Փոքրիկ սպիտակ մուկ մըն էր: Անոր փայլուն սեւ աչքերը յառեցան նստած աղջկան:

-Մէկը դժուարութեան մէջ է,- ճոռաց մկնիկը եւ անմիջապէս ձիւնին մէջ բացուեցան շարք մը փոքր անցքեր եւ քանի մը մուկեր ցատկեցին անցքերէն: Անոնք վազեցին աղջկան մօտ եւ սկսան անոր ոտքերն ու ձեռքերը մարծել:

Բայց մուկերը թիով քիչ էին: Անոնք որոշեցին օգնութեան կանչել իրենց ընկերները՝ նապաստակները ու այս անգամ անցքերէն սպիտակ նապաստակներ դուրս ցատկեցին օգնութեան: Ձիւնածածկ ճամբաներէն արագօրէն հասան շարք մը սկիւռիկներ, եւ շուտով աղջիկը ծածկուեցաւ սպիտակ եւ շագանակագոյն մորթով: Փոքրիկ կենդանիները անսահման ուրախ էին տեսնելով, որ աղջկան այտերը կրկին վարդագոյն կը դառնային:

Շուտով աղջիկը բացաւ աչքերը... ան շնորհակալութիւն յայտնեց իր նոր ընկերներուն եւ պատմեց, թէ ինչո՞ւ ինք այստեղ է եւ ո՞ւր կ'երթայ:

-Մենք ալ հետդ կու գանք,- ըսին կենդանիները: Ու բոլորը միասին հասան սառուցեալ պալատ: Բոլորը թակեցին դարպասը, բայց ոչ ոք պատասխանեց: Ի՞նչ կրնար պատահած ըլլալ Հայր Ֆրոստին: Անոնք բացին ծանր դարպասը, իսկ աղջիկը ներս մտաւ, իր ետեւէն ալ ընկերները:

Փայլուն սառած միջանցքը անոնց կը տանէր դէպի մեծ բիրեղեայ սրահ: Եւ այստեղ, Ձմեռ Պապուկը խոր քնացած էր՝ նստած իր սառած գահին վրայ: Յանկարծ հզօր ձայն մը լսուեցաւ: Ան բացաւ իր կապոյտ աչքերը եւ ժպտեցաւ:

-Ի՞նչ կ'ընէք այստեղ, փոքրիկ ընկերներ,- ըսաւ:

Աղջիկը անոր ամէն ինչ պատմեց:

-Այսինքն՝ ես քնացած եմ այստեղ, մինչ չար ձմեռնային կախարողը կը փորձէր արգիլել՝ Գարունը: Կը կարծեմ, որ ան որոշած է գերազանցել զիս եւ ընդմիշտ երկրի վրայ մնալ... Բայց ես թոյլ չեմ տար անոր: Շնորհակալ եմ, փոքրիկներ, որովհետեւ արթնցուցիք զիս: Հիմա ես կը վերականգնեմ բնական կարգը եւ բոլորին կու տամ այն, ինչին արժանի են: Ետքը, ան փչեց իր արծաթեայ սուլիչը եւ ակնթարթի մը մէջ անոր բոլոր հպատակները յայտնուեցան սրահ: Ան հրամայեց անոնց գտնել ցրտաշունչ ձմեռնային կախարողը եւ բերել զինք պալատ, որպէսզի բանտարկուի մինչեւ յաջորդ տարի: Ան նաեւ ըսաւ, որ երկինքը մաքրեն ամպերէն, որպէսզի արեւը հալեցնէ ձիւնը:

Երբ մեծ դարպասները կրկին բացուեցան, դուրսը արեւը կը շողար, իսկ փափուկ ձիւնը սկսած էր հալիլ: Վերադարձի ճամբան շատ աւելի դիւրին էր: Նոր ընկերները բաժնուեցան՝ խոստանալով դժուարութեան ժամանակ օգնել աղջկան:

Գիւղին մէջ բոլորը ուրախացան՝ հանդիպելով խիզախ փոքրիկ աղջկան: Գարունը նոյնպէս շատ ուրախացաւ՝ լսելով երգերը եւ տեսնելով այն պարերը, որոնք երեխաները պատրաստած էին յատկապէս իրեն համար:





ՓՈՒՆՋ ՄԸ ՆԱՄԱԿՆԵՐ՝ ՍՈՒՐԻԱԶԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՓՈՔՐԻԿՆԵՐԷՆ ՈՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԷՆ

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ԱՆՄԻՋԱՊԷՍ ՀԱՍՅՆԵԼ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ինչպես գիտես ամբողջ աշխարհը հիանդ է համաճարակին պատճառով, իսկ մենք տխուր՝
Արցախի պատերազմին ինկած նահատակներուն, վիրաւորներուն եւ գերիներուն համար:
Ուստի կ'ուզեմ, որ գալիք տարին իր հետ բերէ ուրախութիւն, առողջութիւն եւ խաղաղութիւն:
*Կարօ Մեխանաճեան
Է. կարգ
Ազգ. Սրբոց Նահատակաց Վարժարան - Լաթաքիա*

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ամեն տարուան պէս, այս տարի ալ անհամբեր գալուդ կը սպասեմ: Հաճիս աշխարհին
խաղաղութիւն եւ առողջութիւն բե՛ր, ուրախ տարեշրջան մը թող ըլլայ, եւ ինծի ալ որեւէ լեզուով
գիտելիքներու գիրք մը բե՛ր, որպէսզի ազատ ժամերուս կարդամ:
*Քեզ շատ սիրող՝
Մարի Մալաթջալեան
Դ. կարգ
Ազգ. Ուսումն. Սիւսեան Ծեմարան - Քեսապ*



Գծեց՝ Ալիսիա Գասապեան
Է. կարգ
Ազգ. Քարէն Եփփէ Ծեմարան - Հալէպ



Գծեց՝ Աննա Մարիա Կոստանեան
Չ. կարգ
Ազգ. Սիւսեան Նախակրթարան - Հալէպ

ՆԱՄԱԿ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ

Թեւ ձիւն է, ցուրտ, ձմեռ,
Բայց մանկութենէս ի վեր,
Սիրած ամիսս է Դեկտեմբեր,
Քանի կու գան Կաղանդ եւ Ս. Ծննդեան տօներ:

Փոքր տարիքիս, երբ տհաս մանուկ,
Կը հաւատայի, թէ դուն կու գաս շատ հեռուներէն,
Մեր հայրենիքի Սիփան, Արագած եւ Արարատ ձիւնոտ լեռներէն,
Կորաքամակ, բեռնաւորուած նուէրներով,
Կարմրած թշերով ու ճերմկած մազ, մօրուքով:

Քանի նամակներ եմ յղած ու սիրած խաղալիքս եմ յիշած,
Ու երբ գայիր, ես սրտդողած, մօրս փէշերուն փակած,
Ահ ու վախով կը համբուրէի աշդ, ցուրտէն կարծրացած,
Որ ստանամ նուէրս պատուիրած:

Այսօր արդէն ես պատանի,
Չեմ պատուիրեր ո՛չ խաղալիք, ո՛չ ուտելիք, որ կը ստանայի ձրի,
Կը խնդրեմ միջնորդես Տէր Աստուծոյն, որ տայ ինծի իմաստութիւն,
Ու աշխարհին բաշխէ խաղաղութիւն,
Մարդոց սրտերուն մէջ սերմանէ գթութիւն,
Ազգիս հայոց սեր, միութիւն,
Իսկ ամենագերագոյնը՝
Ամբողջական հայրենիքիս ազատութիւն,
Շուշին, Կարսը, Մուշն ու Սասունը վերադառնան տուն:

Աւօ Ծերմակեան
Ը. կարգ
Ազգ. Սրբոց Նահատակաց Վարժարան - Լաթաքիա





Շատ սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ես քեզ շատ կը սիրեմ եւ անհամբեր գալուդ կը սպասեմ:
Կաղանդ Պապա, շնորհակալ եմ, որ ամէն տարի կը յիշես զիս եւ նուէրներ կը բերես: Փիտեմ պզտիկ չարածնիութիւններ ըրած եմ, բայց աշխատասեր եւ հնազանդ ըլլալուս համար վստահ եմ, որ այս տարի դարձեալ չես մոռնար զիս: Ես մեծ տղայ եղեր եմ եւ այլեւս խաղալիք չեմ ուզեր: Կ'ուզեմ, որ հայրենիքիս՝ Հայաստանին բարեբեր օրեր պարգեւես, Արցախի գրաւուած հողերը եւ Արարատ լեռը ազատագրելու իմաստութիւն տաս մեր ժողովուրդին:
Նուէրներդ իմ բաժինը կ'ուզեմ, որ հերոս զինուորներուն զաւակներուն տանիս եւ ուրախացնես զիրենք:

*Քեզ շատ սիրող՝
Քրիստ Աթիբեան
7. կարգ*

Ազգ. Ուսումն. Միացեալ Ծեմարան - Քեսապ



Շատ սիրելի՛ Կաղանդ Պապա,
Արդէն ըստ սովորութեան մեր տօնածառերը եւ տունները յարդարած ենք լոյսերով եւ զարդերով, որպէսզի քեզ ուրախ ընդունինք՝ տօնելու համար այս հրաշալի ձմեռան տօնը:

Միշտ կ'ուզենք, որ շուտով գաս եւ գեղեցիկ նուէրներովդ մեզ ուրախացնես: Թող այս Նոր Տարին, չարը մեռնի եւ ծագի բարին:

Խնդրեմ աճապարե՛, Կաղանդ Պապա, արդէն զանգակները սկսան դողանջել, չուշանաս...:

*Սիրով՝
Ռոզի Կարապետեան
2. կարգ*

Ազգ. Եփրատ Վարժարան - Գամիշլի

Սիրելի՛ եւ թանկագին՝ Կաղանդ Պապա, Նախ կ'ուզեմ հարցնել որպիսութիւնդ, յուսամ հանգիստ եւ դիւրին ճամբով կը հասնիս մեր քով:

Այս տարի քեզմէ կը խնդրեմ, որ բոլորիս բերես առողջութիւն, հայրենիքիս եւ աշխարհին խաղաղութիւն, իսկ 2022 տարին ըլլայ ուրախ ու բարիքներով լեցուն տարի մը:


*Քեզ շատ սիրող՝
Արենի Լևոնեան
Ե. կարգ*

Ազգ. Ուսումն. Միացեալ Ծեմարան - Քեսապ



*Գծեց՝ Սիրուն Թաշճեան
Է. կարգ*

Ազգ. Քարէն Եփիէ Ծեմարան - Հալեպ



Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ահաւասիկ տարուան ամէնէն շատ սիրուած եւ սպասուած տօները Կաղանդն ու Ս. Ծնունդը կը մօտենան: Մեծ ու փոքր կը պատրաստուինք եւ խանդավառութեամբ կը սպասենք այդ օրերուն, որպէսզի մեր ընտանիքին եւ բարեկամներուն հետ տօնական սեղանին շուրջ նստինք, ուտենք, խմենք, նուէրներ ստանանք եւ հաճելի ժամանակ անցընենք: Այս սուրբ օրերուն, ոչ միայն նուէրներ կը փոխանակենք, այլ՝ մեր թանկարժէք զգացումները, համեստութիւնը, ազնիւ


սերն ու ներողամտութիւնը:
Իմ սիրելի՛ Կաղանդ Պապա, Ես այս տարի միայն մէկ բան կը ցանկամ, որ աշխարհը ըլլայ միշտ խաղաղ ու ընտանիքս՝ առողջ եւ ուրախ: Օրհնաբեր տարի մը կը մաղթեմ քեզի եւ սիրելիներուս: Ամենայն բարիք, Աստուծոյ օրհնութեամբ:

*Բարտի Շահինեան
2. կարգ*

Ազգ. Եփրատ Վարժարան - Գամիշլի



*Գծեց՝
Սերլի Սահակեան
Գ. կարգ
Ազգ. Միացեալ
Նախակրթարան - Հալեպ*



Սիրելի՛ Կաղանդ Պապուկս, Այս տարի ալ, ինչպէս միշտ, քեզի շատ կարօտցեր եմ, մանաւանդ՝ նուէրներուդ, բայց շուարած եմ, թէ ի՞նչ ուզեմ: Մայրս կ'ըսէ, որ այս տարի ուրիշներու մասին ալ մտածեմ: Ուրեմն նուէր մը բերես, որ ուրախացնէ բոլորը՝ մեծն ու փոքրը: Երանի Արցախի հայ մանուկները դառնան իրենց տունները ու սահմանի հայ զինուորը ուրախ եւ ապահով մնայ:

*Քեզի անհամբեր սպասող՝
Գեորգ Կարապետեան
Ե. կարգ
Ազգ. Եփրատ վարժարան - Գամիշլի*

Սիրելի՛ Կարանդ Պապիկ, Ես շատ բարի եւ աշխատասեր եմ, դասերս շատ լաւ կը սորվիմ եւ հայերէնի նիշերս միշտ 10 կ'ըլլան: Կ'ուզեմ, որ տարեդարձիս ներկայ ըլլաս շուտով:

*Մայր Բալենքերեան
Բ. կարգ
Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս*





2022

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Այս ջերմ նամակը կը գրեմ քեզի, որպեսզի
ուղարկեմ այս տարուան իմ մաղթանքները:
Կը մաղթեմ, որ այս տարի ինձի շատ գեղեցիկ
նուէրներ բերես ու կը փափաքեմ կրկին միանալ
մեր բոլոր հարազատներուն: Այս տարի ուրիշ
մաղթանք մըն ալ ունիմ, խաղաղութիւն բերես
Արցախին, որպեսզի բոլոր մանուկները խաղաղ,
ուրախ եւ առողջ ապրին այս երկնքին տակ:

Սիրով՝
Արփի Ճանսըզեան
Ե. կարգ

Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ես եւ բոլոր փոքրիկները քեզ շատ
կը սիրենք եւ քեզի կը սպասենք, որ աղուոր
նուէրներովդ ուրախացնես մեզ:

Փափաքս է, որ խաղաղութիւն բերես
Արցախին եւ բոլոր նուէրները Արցախի
մանուկներուն տանիս:

Յուսամ, որ օր մը կ'այցելեմ Հայաստան
ու Արցախ:

Սիրով՝
Ռիթա Աղամեան
Գ. կարգ

Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Մենք քեզի շատ կարօտցանք, կը փափաքեմ, որ կանուխ գաս եւ մեզի նուէրներ բերես, իմ
անուշիկ, կարմրուկ Կաղանդ Պապուկս:

Ես խոստում մը ունիմ քեզի՝ հայերենը պիտի չմոռնամ եւ միշտ հպարտօրէն պիտի խօսիմ:

Սիրով՝
Շուշի Տէրմէնճեան
Բ. կարգ

Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Կը խնդրեմ, որ 2022-ը խաղաղ տարի մը ըլլայ եւ մեր գրաւուած հողերը մեզի վերադառնան,
եւ աշխարհի բոլոր հայերը վերադառնան հայրենիք:

Վահագն Այնթապեան
Դ. կարգ

Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս



Գծեց՝ Լուսինէ Կարապետեան

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Նոր Տարին մօտեցաւ, ես եւ եղբայրներս
անհամբեր կը սպասենք քեզի:

Մեր խաղաղիքներն ալ մի՛ մոռնար:

Կը խնդրեմ, որ յաջողութիւն եւ
երջանկութիւն պարգեւես բոլորիս:

Քեզ շատ սիրող՝
Մարլա Մանճիկեան
Դ. կարգ

Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս



Գծեց՝

Նժդէհ Պերպերօղլի
Գ. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան - Հալէպ

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Կը մօտենան տարուան ամենէն շատ
սիրուած եւ սպասուած տօները՝ Կաղանդն ու
Սուրբ Ծնունդը:

Աշխարհի վրայ կան շատ աղքատ մարդիկ
ու երեխաներ, որոնք նոյնիսկ ուտելիք չունին:
Անոր համար, այս տարի կը մաղթեմ, որ
մարդիկ աղքատ եւ տխուր չըլլան: Բոլոր
մանուկները տաքուկ տուն ու ընտանիք
ունենան:

Սիրելի՛ Կաղանդ Պապա, եթէ կրնաս սեր եւ
առողջութիւն ալ բեր՝ բոլորին, հոգ չէ՛ եթէ ինձի
ալ խաղաղիք չբերես:

Սիրով՝
Սարգիս Առաքելեան
Ե. կարգ

Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս



Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Այս տարի կը փափաքեմ, որ աշխարհիս խաղաղութիւն բերես,
մանաւանդ՝ մեր հայրենիքին, որպեսզի հայ զինուորները ողջ-առողջ
վերադառնան իրենց տուները:

Սիրով՝
Լուսինէ Կարապետեան
Ե. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան - Հալէպ





Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ես քեզի շատ կարօտեցած եմ: Միայն կ'ուզեմ քեզ առողջ տեսնել: Ունիմ նաեւ պզտիկ խնդրանք մը: Կ'ուզեմ, որ ինձի Սուրբ Գիրք բերես, որպէսզի ամէն օր աղօթեմ բոլոր հայերուն եւ Արցախի ազատութեան համար:

*Սիրով՝
Սարգիս Գրիգորեան
Գ. կարգ
Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս*

Յարգելի՛ Կաղանդ Պապա,
Ես աշխատասեր, ուշիմ եւ ճարպիկ եմ: Ընտանիքս, դպրոցս, ուսուցչուհիներս, ընկերներս եւ հայրենիքս կը սիրեմ:

Կաղանդ Պապա, այս տարուան մաղթանքս է, որ իմ երկու հայրենիքներուն՝ Սուրիոյ եւ Հայաստանի խաղաղութիւն բերես եւ պատերազմները մեզմէ հեռու պահես, որպէսզի կարենանք ապրիլ խաղաղ մանկութիւն մը:

Ծանօթ- Կաղանդ Պապա, ես եւ եղբայրներս խաղաղութեան հետ խաղալիքներ ալ կ'ուզենք:

*Քեզ սիրող՝
Բարտի Օրոպեան
Ե. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Գալէպ*

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ես արդէն մեծ տղայ եղած եմ, Ձեզմէ նուէրներ չեմ ուզեր:

Կը խնդրեմ, որ Աստուած մեր երկրին խաղաղութիւն տայ եւ բոլոր մարդոց՝ առողջութիւն եւ ուրախութիւն:

*Սիրով՝
Ստիւ Կաղեան
Դ. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Գալէպ*

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Անհամբեր կը սպասեմ գալուստիդ, խնդրելով քեզմէ, որ այս տարի ուրախացնես Արցախի մանուկները, իրենց մաղթելով փայլուն ապագայ եւ երջանիկ օրեր:

*Սիրով՝
Սոսիկ Գաբրիէլեան
Դ. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Գալէպ*

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
2020 թուականին, Արցախի մէջ պատահած դէպքերուն պատճառով, շատ զինուորներ նահատակուեցան:

Հայաստանը եւ Արցախը սուգի մէջ են: Կը խնդրեմ քեզմէ Աստուծմէ խաղաղութիւն մեր երկրին, թող գրաւուած հողերը վերադառնան մեզի:

*Սիրով՝
Հայկ Այնթապեան
Գ. կարգ
Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս*

Ես կ'ուզեմ, որ Կաղանդը հաճելի ձեւով տօնենք: Ամէն մարդ ուրախ-գուարթ դիմաւորէ Նոր Տարին եւ վայելէ այդ գեղեցիկ օրը:

Այս տարի կը փափաքեմ, որ Կաղանդը ընկերներուս հետ տօնենք, գեղեցիկ նուէրներ պատրաստեմ ու նուիրեմ ընկերներուս եւ ուսուցչուհիներուս:

Նոյնպէս կ'ուզեմ ընտանիքիս անդամներուն հետ ուրախ ժամեր անցընել եւ նուէրներ ստանալ:

*Բարսեղ Ժամկոչեան
Ե. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Գալէպ*

Շատ սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ես երրորդ կարգի աշակերտուիի եմ: Հնազանդ եմ իմ ծնողքիս եւ ուսուցչուհիներուս եւ կը սիրեմ բոլոր ընկերներս: Քեզմէ կը խնդրեմ, որ աշխարհի բոլոր հիւանդութիւնները անհետացնես եւ խաղաղութիւն բերես հետոյ Արցախին եւ մեր գրաւուած հողերը վերադարձնես մեզի:

*Սիրով՝
Հուրիկ Զիլլիբեան
Գ. կարգ
Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս*



2022



Բարե՛ւ Կաղանդ Պապա,
Ես Նարօտն եմ, վստահ եմ, որ դուն զիս շատ լաւ կը ճանչնաս, որովհետեւ ամէն տարի Դեկտեմբեր ամսուն կը նամակցիս:
Շնորհակալ եմ քու անցեալի բերած բոլոր նուէրներուդ համար, քանի որ դուն միշտ լաւագոյն եւ յարմար նուէրը կը բերես ինձի:
Ճիշդ այդ պատճառով, այս տարի մեծ նուէր մը կը փափաքեմ ունենալ՝ շատ մեծ արդիական բջիջային հեռաձայն մը, բայց մայրս կ'ըսէ. «Տակաւին փոքր ես», ուրեմն որոշումը քուկդ է:

Իսկ ամենակարեւոր խնդրանքս՝ հայրենիքիս խաղաղութիւնն է:
*Քեզ անհամբեր սպասող դուստրդ՝
Նարօտ Սաղպագարեան
Գ. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Գալէպ*



Բարե՛ւ Կաղանդ Պապա,
Ես Ալվինան եմ, շատ կը փափաքեմ տեսնել քեզ, որովհետեւ լսած եմ, որ դուն շատ բարի ես: Շատ կը սիրեմ քեզ, կ'ուզեմ որ միշտ գաս, բոլոր փոքրիկները ուրախացնես եւ մեծերուն ալ ուրախութիւն եւ առողջութիւն բերես:

*Ալվինա Սեմերճեան
Գ. կարգ
Լ. Նաճարեան - Գ. Կիւլպենկեան Կեդր. Վարժարան - Գալէպ*



*Գծեց՝ Ներսես Տաղլեան
Ե. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Գալէպ*






Մենք հայ ենք և միշտ հայերեն կը խօսինք: Ես կ' ուզեմ, որ մեր հայրենիքեն նոյնիսկ մեկ հոգի չգաղթէ ուրիշ երկիրներ, որպեսզի իրենց զաւակները չմոռնան մայրենի լեզուն:

Բայց ափսո՛ս... ամէն անգամ, որ մարդիկ ճամբորդեն, ես կը նեղուիմ, որովհետեւ կը վախնամ, որ մայրենի լեզուն մոռնան: Անոր համար ալ կը յուզուիմ եւ կ' ուզեմ, որ հայը միշտ ալ ապրի իր հայրենիքին մէջ, որպեսզի երբ թշնամին գայ՝ մենք մեր սահմանները քաջաբար պաշտպանենք եւ ազատ-անկախ ապրինք մեր երկրին մէջ:

*Յրանդ Կիրակոսեան
Ե. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Յալէպ*

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ես քեզ շատ կը սիրեմ: Կը խնդրեմ, որ աշխարհիս խաղաղութիւն, բոլոր փոքրիկներուն, յատկապէս Արցախի փոքրիկներուն, հաճելի նուէրներ բերես եւ բոլոր հիւանդութիւններուն վերջը յայտարարես:

*Սիրով՝
Կիրո Միւսաս
Գ. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Յալէպ*



*Գծեց՝ Կարո Աւետիս
Դ. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Յալէպ*

Շա՛տ Սիրելի Կաղանդ Պապա,
2022-ի սեմին կը խնդրենք, որ մեր երկրին՝ Սուրիոյ, լաւ օրեր բերես, մեր ծնողները ալ յոգնեցան դժուարութիւններէն: Իսկ մեր հայրենիքին եւ Արցախին՝ խաղաղութիւն:

*Սիրով՝
Վարագ Գալտընեան
Գ. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Յալէպ*



2022

Մենք ուրախ ենք, որ ձմրան կը տօնենք Կաղանդը: Տօնածառը կը զարդարենք խաղալիքներով, իսկ ծառին զագաթը մեծ ու փայլուն աստղ մը կը դնենք:

Կաղանդի օրը շատ գեղեցիկ սեղան կը սարքենք ուտեստեղէններով եւ անուշեղէններով: Գինի կը խմենք եւ երբ ժամը 12:00 ըլլայ, բոլորս կը հաւաքուինք սեղանին շուրջ եւ կ'աղօթենք: Յետոյ Կաղանդ Պապան կու գայ՝ նուէրներով բեռնաւորուած:

Նոր Տարին գոյնզգոյն պայթուցիկներով կը դիմաւորենք: Յիսուս մանուկին մտորին քով կ'աղօթեմ եւ իր ներկայութիւնը կը զգամ տանս մէջ: Բարի Նոր Տարի եւ բարի մաղթանքներ բոլորին:

*Սիրով՝
Յակոբ Գազեզեան
Ե. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Յալէպ*

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Կը մաղթեմ, որ լաւ Ամանոր մը անցընենք ընկերներուս եւ ընտանիքիս հետ: Ես մեկ քոյրիկ եւ մեկ եղբայր ունիմ: Եղբօրս անունը Տանիէլ է, իսկ քրոջս՝ Միա: Զեզմէ շպարի խաղալիք կ' ուզեմ, որ քրոջս հետ խաղամ: Ես քեզ շատ կը սիրեմ եւ անհամբեր գալուդ կը սպասեմ:

*Սիրով՝
Բրիսբելլա Գրքըմըզեան
Դ. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Յալէպ*



*Գծեց՝ Գառնի Սիրուն Բելաղայեան
Ե. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Յալէպ*





2022

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
 Իմ այս նամակը քեզի կը գրեմ շատ մեծ ուրախությամբ: Այս տարի քեզմէ պզտիկ եւ կարեւոր խնդրանք մը ունիմ: Ես խաղալիք չեմ ուզեր, այլ կ'ուզեմ, որ աշխարհի բոլոր մարդոց խաղաղութիւն, ուրախութիւն եւ առողջութիւն բերես, որովհետեւ մենք դժուար օրերու մէջ կ'ապրինք՝ մեր հայրենիքէն ներս թէ դուրս: Յոյսով եմ, որ մեր հայրենիքի գրաւուած հողերը ազատագրուին եւ հայ զինուորը առողջ եւ անփորձանք վերադառնայ իր տունը:

*Սիրով՝
 Նարոտ Կարապետեան
 2. կարգ
 Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս*

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
 Ահաւասիկ Կաղանդը կը մօտենայ: Անհամբեր եմ հօրս եւ քրոջս հետ շուկայ երթալու՝ Կաղանդի օրուան խաղերուն համար նուէրներ գնելու, մեծ հօրս հետ տօնածառը շտկելու, ինչպէս նաեւ մօրս եւ մեծ մօրս օգնելու ճաշերու պատրաստութեան մէջ:

Քոյրիկս աղցաններու համեղ տեսակներ պիտի պատրաստէ, իսկ ես սեղանը պիտի զարդարեմ:
 Ինչ գեղեցիկ է Կաղանդի գիշերը սիրելիներով դիմաւորել Նոր Տարին:

*Փառնի Պետրոսեան
 Ե. կարգ
 Ազգ. Միացեալ Նախակրթարան -
 Հալէպ*



*Չօճեց՝
 Փառնի Պետրոսեան*



Երբ կը հարցնեն ինծի, թէ ո՞րն է նախասիրած տօնդ, ուրախութեամբ կը պատասխանեմ՝ Ամանորն է:

Նոր Տարին ուրախութեան տօն է, երբ հրաշքեր տեղի կ'ունենան, բոլորին նուիրական երազներն ու ցանկութիւնները կ'իրականան:

Մարդիկ կը շնորհաւորեն իրենց ընկերներն ու հարազատները, իրարու նուէրներ տալով:

Իւրաքանչիւր երկիր ունի այս աւանդութիւնը:
 Բոլոր քրիստոնէաները կը զարդարեն իրենց տուները տօնածառով եւ գոյնզգոյն լոյսերով: Որքան շատ երգեր կան Ամանորի մասին: Այս տօնը բոլորին լաւ ապագայի յոյս կու տայ:

Յիսուսի ծնունդով մենք կը վերանորոգուինք: Իսկ փոքրիկները արդէն անհամբեր կը սպասեն Կաղանդ Պապային նուէրներուն:

Նոր Տարուան եւ Ս. Ծնունդին առիթով բոլորին կը մաղթեմ արեւշատութիւն, առողջութիւն եւ յաջողութեամբ լեցուն տարի մը:

*Սիրով՝
 Նանար Գասապեան
 Ե. կարգ
 Ազգ. Միացեալ Նախակրթարան -
 Հալէպ*



Սիրելի՛ Կաղանդ Պապա,
 Ամեն տարուան նման անձնական նուէր մը պիտի խնդրեի քեզմէ, բայց երկար մտածելէ ետք որոշում առի: Այս տարի կ'ուզեմ, որ մեզի բերես մեզմէ խլուած Պատմական Հայաստանը, Արցախն ու Արարատը եւ պահես Սիւնիքը:

Ա՛խ ինչքան կ'ուզեի բարձրանալ Արարատի գագաթին ու այնտեղ պարզել եռագոյնը:
 Յուսամ, որ կը հասնիմ փափաքիս:

Վերջապէս կը խնդրեմ, որ շատ նուէրներ բերես նաեւ Արցախի փոքրիկներուն:

*Քեզի անհամբեր սպասող՝
 Աւետ Գատեհճեան
 Ե. կարգ
 Ազգ. Միացեալ Նախակրթարան - Հալէպ*

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
 Վստահ եմ, որ զիս կը յիշես եւ այս Կաղանդին ալ ամեն տարուան պէս մեզի պիտի այցելես եւ նուէրներ բերես: Քեզմէ կը խնդրեմ՝ հայրենիքիս խաղաղութիւն եւ հայ զինուորին ուժ՝ պաշտպանելու մեր երկրին սահմանները:

*Սիրով՝
 Արա Արոյեան
 Դ. կարգ
 Ազգ. Միացեալ Նախակրթարան -
 Հալէպ*





Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Նոր Տարին մտնեցաւ, եւ անհամբեր կը սպասեմ քեզի:
Այս տարի կը խնդրեմ, որ խաղաղութիւն բերես աշխարհին, ուրախութիւն փոքրիկներուն եւ
առողջութիւն բոլորին:
Կաղանդ Պապա, շուտ եկո՛ւր. ներկայութիւնդ շատ հաճելի է:
Անհամբեր քեզի կը սպասեմ:

*Քրիստին Սահակեան
7. կարգ*

Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս

Իմ սիրելի՛ Կաղանդ Պապա,
Շատ կարօտեցր եմ ու անհամբեր կը սպասեմ այցելութեանդ:
Ես շատ բարի, հնազանդ եւ աշխատասեր էի, արդեօք ի՞նչ պիտի բերես ինծի:
Գիտեմ, որ շատ խաղալիքներ բերած ես ինծի, բայց այս անգամ ուրիշ բան կ'ուզեմ քեզմէ՝
խաղաղութիւն հայրենիքիս, առողջութիւն մեծ մօրս, եւ ուրախութիւն հօրս ու մօրս, չմոռնամ
ըսել՝ պզտիկ տեղ մը պատրաստած եմ ծառին տակ քեզի համար:

*Լիդա Ծաղիկեան
7. կարգ*

Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Քեզմէ կը խնդրեմ, որ 2022 տարեշրջանը ըլլայ առողջութեամբ, յաջողութեամբ եւ
ուրախութիւններով լեցուն տարի մը: Շա՛տ բան է ուզածս...:

*Սիրով՝
Սեւակ Ապուլապուտեան
7. կարգ*

Ազգ. Միացեալ Նախակրթարան - Հալէպ



*Գծեց՝ Ալիք Պաղտոյեան
7. կարգ*

Ազգ. Միացեալ Նախակրթարան - Հալէպ



Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Այս նամակը կը գրեմ յուսալով, որ շուտով կը հանդիպինք եւ միասին Կաղանդը կը տօնենք:
Կը խնդրեմ քեզմէ, որ ինծի Հայաստանէն բերես հայկական զգեստ մը, ինչպէս նաեւ հայերէն
գիրքեր: Բայց այս բոլորէն առաջ կը խնդրեմ, որ ուրախացնես աղքատ եւ որբ պզտիկները:

*Սիրով՝
Շուշի Գարաբեգուպեան
2. կարգ*

Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ես շատ կարօտեցած եմ քեզի:
Այս տարի կը խնդրեմ քեզմէ, որ ինծի Հայաստանի եւ Արցախի դրօշակները բերես, որովհետեւ
շատ կը փափաքիմ ունենալ զանոնք:
Քեզի կը մաղթեմ առողջութիւն եւ ուժ:

*Սիրով՝
Դուին Գարաբեգուպեան
2. կարգ*

Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս



Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Անհամբեր կը սպասեմ Կաղանդի գիշերուան, որովհետեւ 2022-ը տարբեր
ուրախութեամբ կ'ուզեմ դիմաւորել: Կը մաղթեմ, որ համայն աշխարհին
համար ըլլայ խաղաղ, բարի եւ երջանկութիւն պարգեւող տարի մը: Եւ
վերջապէս այս տարի պիտի խնդրեմ քեզմէ, որ ալ համաճարակի
պատմութեան վերջ մը դնես, որպէսզի մեր աշխարհին համար նոր եւ
ուրախ պատմութիւններով սկսի Նոր Տարին՝ 2022-ը:

*Աւօ ԶիլԱբօշեան
2. կարգ*

Ազգ. Միացեալ Նախակրթարան - Հալէպ

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ահա անցաւ տարի մըն ալ ու անհամբեր կը սպասենք, ուրախ ժպիտով դիմաւորելու Նոր
Տարին:
Յուսամ, որ Նոր Տարին օրհնեալ եւ խաղաղ տարի մը ըլլայ ձեզի, բոլոր սիրելիներուն եւ
ամբողջ աշխարհին համար:
Կը խնդրեմ Աստուծմէ, որ առողջութիւն եւ խաղաղութիւն տայ բոլոր աշխարհին, ինչպէս
նաեւ հեռու պահէ մեզ ամեն տեսակի փորձանքներէն:
Կը փափաքիմ, որ կատարուի խնդրանքս, որպէսզի աշխարհի մանուկները ուրախ-գուարթ
ապրին:

*Սիրով՝
Սոնա Պաղտասարեան
Ե. կարգ*

Ազգ. Միացեալ Վարժարան - Դամասկոս





Գծեց՝ Չալեն Ճուհարեան
Է. կարգ
Ազգ. Քարեն Եփփե Ծեմարան - Հալէպ



Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ես քեզի շատ կարօտցայ, անհամբեր կը սպասեմ գալուդ: Գիտեմ ճամբար շատ երկար է, որովհետեւ կ'այցելես աշխարհի բոլոր մանուկներուն եւ գիրենք կ'ուրախացնես գեղեցիկ նուէրներովդ: Ես բարի եմ, աշխատասեր ու հնազանդ եմ ծնողքիս եւ ուսուցիչներուս: Կը փափաքիմ, որ ամբողջ Արցախը անկախ ըլլայ ու հայ փոքրիկները ուրախ, ազատ եւ խաղաղ ապրին...:

Հայկ Յարութիւնեան
Չ. կարգ
Ազգ. Եփրատ Վարժարան - Գամիշլի

Ահա հասաւ բոլորիս սպասած Նոր Տարին՝ յոյսերով եւ լոյսերով: Ես շատ կը սիրեմ Կաղանդը, որովհետեւ նուէրներ կը ստանամ:

Ես հիմա արդէն պատանի եմ եւ շատ լաւ գիտեմ, թէ նուէրներուն կողքին՝ առողջութեան, երջանկութեան եւ խաղաղութեան ալ պետք ունիք:

Իմ մաղթանքն է, որ Նոր Տարին աշխարհի բոլոր մանուկներուն երջանիկ եւ անհոգ մանկութիւն բերէ:

Քրիստ Լէիմճեան
Ե. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Հալէպ

Բարե՛ւ, իմ շատ սիրելի Կաղանդ Պապա,
Քեսապէն քեզի կը գրեմ: Ազգային Ուսումնասիրաց Միացեալ Ծեմարանի Ե. Կարգի աշակերտ՝ Քրիստ Աշրգեանն եմ: Ես շատ կը սիրեմ Նոր Տարին եւ ամէն տարի քեզի նամակ կը գրեմ:

Այս տարի դարձեալ կը սպասեմ անակնկալներուդ: Ես ֆութպոլ շատ կը սիրեմ եւ կը խնդրեմ, որ ինծի գնդակ մը բերես: Յոյսով եմ, որ իմ եւ աշխարհի բոլոր մանուկներուն ցանկութիւնները կ'իրականանան եւ Նոր Տարին իր հետ կը բերէ խաղաղութիւն եւ առողջութիւն:

Սիրով
Քրիստ Աշրգեան
Ե. կարգ
Ազգ. Ուսումն. Միացեալ Ծեմարան - Քեսապ

Կաղանդ Պապա, քեզմէ կը խնդրեմ, որ այս տարի ոչ միայն նուէրներ բերես մեզի, այլ՝ յաջողութեամբ եւ օրհնութեամբ լեցուն տարի մը: Կը խնդրեմ, որ մեր փափաքները կատարուին, միշտ ամէն բանի մէջ յաջողակ ըլլանք եւ մեր հողերը ապահով ըլլան:

2022-ին մեր Պատմական Հայաստանի հողերը ազատագրենք եւ մեր դպրոցներն ու երկիրը ապահով ըլլան:

Սիրով՝
Սիրուն Աւետիքեան
Ե. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան - Հալէպ





Գործնականություններ

= 8
 = 2
 = 6
 = 4

+ + =

+ - =

- + =

Փորձե՛լ լուծել:

Գտի՛ր 5 տարբերություններ երկու պատկերներուն միջև:





Գտի՛ր այս գեղեցիկ ամանորեան պատկերին մեջ պահուած իրերը:



2022

Սիրելի՛ ԿԿՈՒ-ի փոքրիկներ, ձեզմե որո՞նք կը սիրեն գծել: Եկե՛ք միասին սորվինք գծել, ապա՝ ներկենք այս ամանորեան գեղեցիկ պատկերները:



Իրաքանչիւր թիւ իր տակ գտնուող երկու թիւերուն գումարումն է: Շարունակէ՛ լուծել:



«ԿԿՈՒ»-ի խմբագիր՝
ՄԱՐՄԱՆ ԿՈՏԵՆԱՆ-ՇԱՀԻՆԵԱՆ
Նկարագարողը եւ ձեւաւորող՝
ՌԱՓՖԻ ՔԷՉԻՉԵԱՆ

